# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, (0263)42138 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2023թվականի N 97

## ,,ԽԱՇԹԱՌԱԿԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ,, ԾՐԱԳՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման» ԼՖ ծրագրով նախատեսված «Խաշթառակի մանկապարտեզի հիմնանորոգման» համար անհրաժեշտ նախահաշվարկային գումարը կազմում է 248 240 435/ երկու հարյուր քառասունութ միլիոն երկու հարյուր քառասուն հազար չորս հարյուր երեսունհինգ/ ՀՀ դրամ: Համայնքի ներդրումը կազմել է 4% (9 929 617/ ինը միլիոն ինը հարյուր քսանինը հազար վեց հարյուր տասնյոթ/ՀՀ դրամ): Համայնքի կողմից կատարվել է ներդրում 5 481 815/ հինգ միլիոն չորս հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր տասնհինգ/ ՀՀ դրամ, պահանջվում է կատարել ևս 4 447 802/ չորս միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր երկու/ ՀՀ դրամ ներդրում:
Հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով.

***Համայնքի ավագանին որոշում է.***

1.Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ «Խաշթառակի մանկապարտեզի հիմնանորոգում» ծրագրի իրականացման համար Իջևան համայնքի 2023թ.-ի բյուջեից հատկացնել 4 447 802/ չորս միլիոն չորս հարյուր քառասունյոթ հազար ութ հարյուր երկու/ ՀՀ դրամ:
2.Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

Կողմ -21 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԹԱԲԵԿՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԱՄԻՐԽԱՆՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ԱՅՎԱԶՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՍԱՍՈՒՆ

ԱՍԻԼՅԱՆ ՄԵԴՈՐԱ

ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՍՅՈՒԶԱՆՆԱ

ԲՈՒՂԴԱՐՅԱՆ ՄՀԵՐ

ԴՈՎԼԱԹԲԵԿՅԱՆ ԱՐՄԻՆԵ

ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ ԽՈՐԵՆ

ՀԱՄԶՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՂԱԶՈՒՄՅԱՆ ՄԱՆԵ

ՂԱԶՈՒՄՅԱՆ ՎԱՀԱՆ

ԾԱՂԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ՄԵՀՐԱԲՅԱՆ ԱՆՈՒՇ

ՄԵՍՐՈՊՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՉԱՊՈՒԽՅԱՆ ԳԱԳԻԿ

ՋԱՆՎԵԼՅԱՆ ՆԱԻՐԻ

ՍԱՐՀԱՏՅԱՆ ՍՏԵՓԱՆ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՏՅՈՄ

ՎԱՐՇԱՄՅԱՆ ՎԱՀԵ

ՎԻՐԱԲՅԱՆ ՆԱՆԵ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԾԱՂԱՐՅԱՆ**